

Հայցվոր / դիմող «ԴՂ յոռու Տարգմանչարար Զ. և ժրգարաչապ ը»

Կից ուղարկվում է ՀՀ վարչական դատարանի N 476/ 0117/05/19 վճիռը / որոշումը Ձեզ ի տնօրինություն:

Առդիր 3 թերթից:

Դատավորի օգնական՝  Կ. Գրիգորյան

16-918/20



**ՈՐՈՇՈՒՄ**  
**ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

7 փետրվարի 2020թ.

ք. Վանաձոր

ՀՀ վարչական դատարանը, հետևյալ կազմով՝  
նախագահությամբ դատավոր՝ **Արշակ Ալավերդյանի**  
քարտուղարությամբ՝ **Արմինե Մարաբյանի**  
մասնակցությամբ՝  
հայցվոր՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի  
աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի  
ներկայացուցիչ՝ **Ալիկ Սահակյանի**

2020թ. փետրվարի 5-ին, դռնբաց դատական նիստում, քննելով վարչական գործն ըստ հայցի՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի /հասցեն՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, վկայական 01 Բ 000756, ՀՎՀՀ՝ 06930769/, ընդդեմ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի /հասցեն՝ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Զ. Անդրանիկի 8/1/ «Ալավերդի համայնքի ղեկավար՝ Ս. Խեչումյանին բարենպաստ վարչական ակտ ընդունելու պարտավորեցման պահանջի մասին».


**ՊԱՐԶԵՑ՝**

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ 28.10.2019թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, ընդդեմ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի, խնդրելով պարտավորեցնել պատասխանողին՝ կայացնել վարչական ակտ, համաձայն որի պետք է դադարեցնել «Ալավերդի քաղաքային համայնքի թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լաուրա Պետրոսի Ավագյանի պաշտոնավարումը և լուծել նրա հետ կնքված՝ 30.12.2014թ. թիվ 10 աշխատանքային պայմանագիրը:

ՀՀ վարչական դատարանի՝ 04.11.2019թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի /այսուհետ նաև՝ **Օրենսգիրք**/ համաձայն գործը նախապատրաստվել է դատաքննության:

Հայցվորը ներկայացրած հայցադիմումով ՀՀ վարչական դատարանին հայտնել է, որ ՀՀ Լոռու մարզի «Ալավերդի քաղաքային համայնքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի տնօրեն է հանդիսանում՝ 1949թ. ծնված՝ Լաուրա Պետրոսի Ավագյանը: Վերջինս այդ պաշտոնն զբաղեցնում է համաձայն՝ Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 30.12.2009թ. թիվ 102 կարգադրության: 2014թ. դեկտեմբերի 30-ին Լաուրա Ավագյանի հետ կնքվել է՝ թիվ 10 աշխատանքային պայմանագիրը, որի 4-րդ կետով սահմանված գործողության ժամկետը՝ 28.12.2018թ. համաձայնագրով երկարացվել է մինչև՝ 2019թ. դեկտեմբերի 31-ը: Լաուրա Ավագյանի թեկնածությանը համաձայնություն է տրվել Ալավերդի համայնքի ավագանու՝ 2009թ. նոյեմբերի 30-ի՝ թիվ 73-Ա որոշմամբ: ՀՀ գործող օրենսդրության համաձայն՝ Լաուրա Ավագյանն իրավունք ուներ պաշտոնավարել մինչև 2013 թվականը: Սակայն, խախտելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները, մասնավորապես՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետը, նա դեռևս շարունակում է պաշտոնավարել և Ալավերդի համայնքի ղեկավարը որևէ գործողություն չի կատարում Լաուրա Ավագյանին պաշտոնից ազատելու ուղղությամբ: Համայնքի ղեկավարին բազմիցս գրավոր և բանավոր զգուշացվել է այդ մասին և առաջարկվել, որպեսզի նա կատարի պետության կողմից իրեն պատվիրակված լիազորությունը, այն է՝ նա իրավասու է դադարեցնել «Ալավերդի քաղաքային համայնքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնավարումը՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը: Ալավերդի համայնքի ղեկավար՝ Սասուն



Խեչունյանը բանավոր կերպով չի հրաժարվել կատարել ՀՀ օրենսդրության պահանջները, խոստացել է դադարեցնել տնօրենի պաշտոնավարումը՝ վերջինիս ամենամյա արձակուրդից վերադառնալուց հետո: Փաստորեն՝ Սասուն Խեչունյանը չի կատարել իր խոստումը և Լոռու մարզպետարան չի ներկայացրել որևէ իրավական հիմք /ավագանու համաձայնությունը, համայնքի ղեկավարի որոշում/ թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնավարման դադարեցման վերաբերյալ:

Պահանջը հիմնավորող իրավական փաստարկներն են:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի համաձայն՝ «Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝ բ/ լրացել է նրա 65 տարին», իսկ նույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Համայնքն իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով ստեղծել համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /այսուհետ՝ համայնքային կազմակերպություն/: Համայնքի անունից համայնքային կազմակերպությունն ստեղծում է համայնքի ղեկավարը: Համայնքային կազմակերպության ստեղծման մասին որոշումը և կազմակերպության կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին: Համայնքային կազմակերպությունների վրա տարածվում են սույն օրենքի պահանջները, բացառությամբ 14-րդ հոդվածի, որով նախատեսված լիազորություններն իրականացնում է համայնքի ղեկավարը:»:

Ավավերդի համայնքի ղեկավար՝ Սասուն Խեչունյանին՝ 07.06.2019թ. Լոռու մարզպետի թիվ 01/106.2/04037-2019 գրությամբ պաշտոնապես առաջարկվել է դադարեցնել «Ավավերդի քաղաքային համայնքի թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տնօրենի Լաուրա Պետրոսի Ավագյանի աշխատանքային գործունեությունը: Բացի այդ, 2019թ. հուլիսի 17-25-ը Ավավերդու համայնքապետարանում իրականացվել է արտահերթ իրավական և մասնագիտական ստուգում Լոռու մարզպետարանի համապատասխան աշխատանքային խմբի կողմից, որի արդյունքում մի շարք այլ խախտումների հետ մեկտեղ ևս արձանագրվել է «Ավավերդի քաղաքային համայնքի թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տնօրենի հետագա գործունեության անհնարինության փաստը: Խախտումների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով արձանագրությունը ներկայացվել է Ավավերդի համայնքի ղեկավարին, որին ի պատասխան նա պետք է ներկայացներ առարկություններ կամ առաջարկություններ: 2019թ. սեպտեմբերի 4-ին համայնքի ղեկավարը Լոռու մարզպետարան է ներկայացրել վերը նշված աշխատանքային խմբի կողմից արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ «Ավավերդի քաղաքային համայնքի թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տնօրենի ազատման մասին որևէ իրավական հիմք չի ներկայացվել: Այսինքն՝ Ավավերդի համայնքի ղեկավարը կրկին դրսևորել է անգործություն:

Հայցվորը ՀՀ վարչական դատարանին խնդրել է՝ պարտավորեցնել պատասխանողին կայացնել վարչական ակտ, համաձայն որի պետք է դադարեցնել «Ավավերդի քաղաքային համայնքի թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տնօրենի Լաուրա Պետրոսի Ավագյանի պաշտոնավարումը և լուծել նրա հետ կնքված՝ 30.12.2014թ. թիվ 10 աշխատանքային պայմանագիրը:

Գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, դատական նիստում հայցվորի ներկայացուցիչ՝ Ալիկ Սահակյանը ՀՀ վարչական դատարանին ներկայացրել է ՀՀ Լոռու մարզի Ավավերդի համայնքի ղեկավար՝ Սասուն Խեչունյանի՝ 27.12.2019թ. N 273 կարգադրությունը՝ Լաուրա Ավագյանին աշխատանքից ազատելու մասին և խնդրել է գործի վարույթը կարճել, քանի որ վեճն ըստ էության սպառվել է:

Պատասխանողը հայցադիմումի վերաբերյալ գրավոր պատասխան չի ներկայացրել, Օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստին:

ՀՀ վարչական դատարանը ղեկավարվելով Օրենսգրքի 103-րդ հոդվածով, դատական նիստը շարունակել է պատասխանողի ներկայացուցչի բացակայությամբ:

Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարծում է գործի վարույթը, եթե՝ վեճն ըստ էության սպառվել է:

Օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցերը:

ՀՀ վարչական դատարանն արձանագրելով, որ ՀՀ Լոռու մարզի Ավավերդի համայնքի ղեկավար Սասուն Խեչունյանի՝ 27.12.2019թ. N 273 կարգադրությամբ՝ Լաուրա Ավագյանն արդեն իսկ ազատվել է աշխատանքից, ինչից հետևում է, որ կողմերի միջև վեճն ըստ էության սպառվել է, եզրակացնում է, որ սույն վարչական գործի վարույթը, Օրենսգրքի 96-րդ հոդվածի հիմքով ենթակա է կարճման:



Դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցի վերաբերյալ ՀՀ վարչական դատարանն արձանագրում է, որ հայցվորը վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը: Գործի վարույթը կարճելու պարագայում, Օրենսգրքի 60-րդ հոդվածի կարգով, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 96-րդ, 97-րդ և 127-րդ հոդվածներով, դատարանը

**ՈՐՈՇԵՑ՝**

1. Թիվ ԿԴ 6/0117/05/19 վարչական գործի վարույթն, ըստ հայցի՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի, ընդդեմ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավար՝ «Ալավերդի համայնքի ղեկավար Ս. Խեչումյանին բարենպաստ վարչական ակտ ընդունելու պարտավորեցման պահանջի մասին», կարճել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ մինչև օրինական ուժի մեջ մտնելը:

ԴԱՏԱՎՈՐ՝



Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Որոշումը չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ  
« 09 » 03 2020թ.

ԴԱՏԱՎՈՐ



Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ